

## ՅԻՍՈՒԽ ՏԵՐԻ ԵՐԱԾՈՂ

### ՄԱՀ ԱՐԱՄ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ

Շբ.՝ 18 Ապրիլ. — Մահօթ նկարիչ Պր. Արամ Խաչատրեան, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, մեռած էր այս առաւօտ, Յաւզարկաւորութիւնը երեկոյին կատարուեցաւ Ս. Էջմիածին Եկեղեցին, ի ներկայաւթեան բոլոր Միաբանից և աշակերտաց և ժողովուրդի։ Արքազան Պատրիարքը խօսեցաւ հոկիրճ դամբանական մը. գրաւատեց ընտիր արուեստագէտը և պատուական հոյրը, որ իր կեանքին մինչեւ վերջին շռւնչը ոչինչ խնայած էր իր զաւակներուն դասիարակութեան համար, Երկար տարիներէ ի վեր զծագրութեան և նկարի ուսուցիչ էր Ժանգ և Թարգմանչաց վարժարաններուն մէջ։

### ՀԱՆԳԻՍ

#### Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՊԱՐՈՆԵԱՆԻ

Միաբանութիւնս վիշտն ունեցաւ կորսընցնելու իր բազմամետյ անդամներէն ծերունազարդ այս հոգեսրականը, որ Ապրիլ 2 ի 12. օրը վախճանեցաւ Ս. Քաղաքին Ֆրանսական Հիւանդանոցին մէջ, ուր փոխադրուած էր Երկու օրեր առաջ։

Մնած էր 1862 ին՝ Շապին-Գարանիստարի Չրտախի գիւղը։ 1885 ին Երուսաղէմ գալով կ'աշակերտի ժառ. վարժարանին զոր կ'աւարտէ 1888 ին։ Անմիջապէս ետք պաշտօնի կը կոչուի Պատրիարքարանի Դիւանը, ուր տարի մը իրը օգնական-Դիւանապետ ծառացիէ ետք կարգուած է Դիւանապետ, պաշտօն մը՝ զոր վարած է քառորդ գար շարունակ։ 1892 ին ձեռնադրուած է վարդապետ՝ Տ. Յարութիւն Պատրիարք Վեհապետանէ, որ վերականշած է զինք իր անունով։ Տարիներով եղած է Գաւազանակիրը իր հոգեծնողին, Բնուորութեամբ լուռ, նկարագրով նախանձախնդիր, սրանց սիրող էր Առուր Աթոռոյ։ Իր հինգ տարիներէ ի վեր բռնորովին դադրած էր զործելէ, տառապագին վիճակի մը հետեւնքով դատապատաւած ըլլալով անշարժութեան։

Հանգուցեալը կիրթ էր գեղագրութեան և գծագիտութեան, մասամբ նաև նկարչութեան մէջ, և այս տեսակէտով օգտակար եղած է, ժառնգ. վարժարանի մէջ իրքեւ ուսուցիչ։

Հանգուցեալին օծումը, վախճանման վաղորդացնին, կատարեց Ամեն. Տորգոմ Ս. Պատրիարք Հայրը և խօսեցաւ դամբանականը. — Յաւզարկաւորութիւնը կատարուեցաւ. Լուսարարապետ Տ. Մեսրոպ Արքազանի զիմաւորութեամբ և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան, աշակերտաց և ժողովրդեան։

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

Իր հետեւոնք անցեալ կիրակի, 19 Ապրիլ, Յոպակէի մէջ տեղի ունեցած Արար-Հրէական ընդհարումներուն, սրոնց մասին արտասահմանեան մամուլին ու գործակալութեանց տեղիկութիւններն չափազանցուած էին յայտնապէս, այս հինգ օրերուն առետրական կայուն վիճակ մը յառաջ եկաւ Ս. Քաղաքիո և միւս քաղաքներուն մէջ սկսած գործադուլին պատճառուու. Բայց, կառավարական հսկողութեանց շնորհիւ տեղի չեն ունեցած արիւնոտ մեծ անկարգութիւններ։

(«Սին», 1936, մ. Տարի, Մայիս, Թիւ 5, էջ 159-160):

Պազեստինի մէջ իրը վեց շաբաթներէ ի վեր շարունակուաղ գործադուլին հետեւոնքով յառաջ եկած անսանական գրքուարութեանց մէջ մեր կարօտեալներուն հարկ եղած խնամքը մատաւցանելու համար, Ս. Աթոռոյս Տնօրէն ժողովը վահերացուց ժողովրդային ձեռնարկութեամբ կազմուած նպաստաբաշխ Մարմին մը, որ հանգանակութիւն կը կատարէ և երկու շաբաթներէ ի վեր լծուած է օգնութեան այդ գործին։ Վանական վարչութիւնը իր կողմէ հարկաւոր բարոյական և նիւթական աջակցութիւնը չի զլանար այս ձեռնարկին։

(«Սին», 1936, մ. Տարի, Յունիս, Թիւ 6, էջ 192):